Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 30-06-2023 թ. որոշմամբ
«ԴԻԼԻՋԱՆ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2022 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		ԴԻԼԻՋԱՆ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹ
1.2 Գտնվելու վայրը		ՏԱՎՈՒՇ ԴԻԼԻՋԱՆ ԳԵՏԱՓՆՅԱ ՓՈՂ. 7
1.3 Պետական գրանցման համարը		222.160.881574
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2015-12-10
1.5 ՀՎՀՀ-ն		07618624
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)77701466
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		
1.8 Էլեկտրոնային փոստը		o.davtyan@philin.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	3	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Դիլիջան քաղաքում եկեղեցու կառուցում և հարակից զբոսայգու բարեկարգում	444,234,438
	Մուտք Ձեռնարկատիրական գործունեությունից	3,700,000
	փոխառության վերադարձ	20,234,000
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		

Digitally signed by DAVTYAN

	Դիլիջան քաղաքում եկեղեցու կառուցում և հարակից զբոսայգու բարեկարգում	50,842,924
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Դիլիջան քաղաքում եկեղեցու կառուցում և հարակից զբոսայգու բարեկարգում	478,911,864	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	541,267,753	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	478,911,864	

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 35 էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Համախմբված ֆինանսական հաշվետվություններև Անկախ աուդիտորի եզրակացություն

«Դիլիջան Դեվելոփմենթ» Հիմնադրամ

31 դեկտեմբերի 2022թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	6
Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	9
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

Grant Thornton

Անկախ աուդիտորի եզրակացություն

Երևան Պլազա բիզնես կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9
Հ. + 374 10 50 09 64/61

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street,
Yerevan 0015, Republic of Armei
T + 374 10 50 09 64/61

«Դիլիջան Դեվելոփմենթ» Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Դիլիջան Դեվելոփմենթ» Հիմնադրամի (Հիմնադրամ) և նրա դուստր ընկերությունների (միասին՝ Խումբ) համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները տալիս են Խմբի՝ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախմբված ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքների ու համախմբված դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Խմբի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Խմբի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Խումբը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Խմբի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ

Grant Thornton

թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Խմբին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:
- Ձեռք ենք բերում բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի ներսում գործող կազմակերպությունների կամ ձեռնարկատիրական գործառնությունների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատու ենք Խմբի աուդիտի ուղղորդման, ղեկավարման և իրականացման համար: Մենք ամբողջովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
Տնօրեն

Էմիլ Վասիլյան, FCCA
Առաջադրանքի պատասխանատու

30 հունիսի 2023թ.

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	1.471.663	1.310.144
Գոդվիլ	6	274.226	262.598
Այլ ոչ նյութական ակտիվներ	5	52.198	49.756
		1,808,087	1,622,498
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ		4 663	461
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	7	168 474	27.165
Տրամադրված փոխառություններ		10.000	-
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	8	39,965	64.517
		223.102	92.143
Ընդամենը ակտիվներ		2.021.189	1,714.641
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Փոխառություններ	9	2.996.965	3.272,896
Հետաձգված հարկային պարտավորություններ	10	60.718	60.718
Ակտիվներին վերաբերող շնորհներ	11	225.366	134.428
		3.283.049	3,468,042
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	12	76 815	32.356
		76.815	32,356
Կապիտալ և պահուստներ			
Կուտակված վնաս		(2. 380.464)	(2.827.546)
Վերագնահատման պահուստ		276.602	276.602
Այլ պահուստներ		765,187	765,187
		(1.338,675)	(1.785.757)
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		2,021.189	1,714.641

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2023թ. հունիսի 30-ին

Արթուր Ամիրխանյան
Տնօրեն

Արմինե Սահակյան
Հաշվապահական հաշվառման ծառայություններ մատուցող ընկերության ներկայացուցիչ

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 36-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ միասին:

Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հասույթ	13	221,748	204,905
Ծառայությունների ինքնարժեք	14	(134,992)	(140,677)
Համախառն շահույթ		86,756	64,228
Շնորհներից և նվիրատվություններից եկամուտ	15	483,288	321,482
Այլ եկամուտ		1,738	3,971
Համայնքի զարգացման ծախսեր	16	(202,903)	(109,704)
Վարչական ծախսեր	17	(371,333)	(171,197)
Այլ ծախսեր	18	(13,627)	(21,400)
Գործառնական գործունեությունից արդյունք		(16,081)	87,380
Ֆինանսական ծախս	19	(166,962)	(179,405)
Փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ		630,125	294,190
Տարվա արդյունք		447,082	202,165
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		447,082	202,165

Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 36-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Վերագնահատման պահուստ	Այլ պահուստներ	Կուտակված վնաս	Ընդամենը
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	276,602	765,187	(3,029,711)	(1,987,922)
Տարվա արդյունք	-	-	202,165	202,165
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	202,165	202,165
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	276,602	765,187	(2,827,546)	(1,785,757)
Տարվա արդյունք	-	-	447,082	447,082
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	446,444	446,444
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	276,602	765,187	(2,380,464)	(1,338,675)

Սեփական կախիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 36-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Նվիրատվություններից ստացված դրամական միջոցներ	574,171	307,781
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ	225,785	204,445
Մատակարարներին վճարված դրամական միջոցներ	(452,007)	(188,741)
Նվիրատվությունների համար վճարված դրամական միջոցներ	(153,011)	(81,331)
Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ	(77,922)	(52,663)
Վճարումներ ՀՀ պետական բյուջե	(47,609)	(30,984)
Այլ վճարումներ	(5,156)	(3,446)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	64,251	155,061
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(224,134)	(100,857)
Դուստր ընկերության ձեռքբերում	(11,000)	-
Փոխառության տրամադրում	(23,000)	-
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(258,134)	(100,857)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Փոխառություններից մուտքեր	168,000	-
Ֆինանսավորման գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	168,000	-
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ ավելացում/(նվազում)	(25,883)	54,204
Ձեռքբերված դուստր ընկերության դրամական միջոցների մնացորդի զուտ ավելացում	2,405	-
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(1,074)	199
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	64,517	10,114
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	39,965	64,517

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 36-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Դիլիջան Դեվելոփմենթ» Հիմնադրամը (Հիմնադրամ) ստեղծվել է 2015թ. հոկտեմբերի 7-ին:

Հիմնադրամի գործող կանոնադրությունը գրանցվել է 2015թ. դեկտեմբերի 10-ին՝ ՀՀ պետական ռեգիստրի Իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանման Կենտրոնական մարմնի կողմից (գրանցման համար՝ 222.160.881574, վկայական 03Ա1031574):

2016թ. մարտ ամսին Հիմնադրամն իր կապակցված կողմերից անհատույց ստացել է «Դիլիջան Դեվելոփմենթ Քամփնի» ՓԲԸ-ի և «Դ Վենչուրս» ՓԲԸ -ի կանոնադրական կապիտալում բաժնետոմսերի 100 տոկոս բաժնեմասերը: «Դիլիջան Դեվելոփմենթ Քամփնի» ՓԲԸ-ն գրանցվել է ՀՀ պետական ռեգիստրի կողմից 2013թ. հոկտեմբերի 7-ին, իսկ «Դ Վենչուրս» ՓԲԸ-ն՝ 2013թ. ապրիլի 19-ին: «Դիլիջան Դեվելոփմենթ Քամփնի» ՓԲԸ-ն իր հերթին, 2014թ հոկտեմբերին ձեռք է բերել «Դիլիջանի բեռնաուղևորատար ավտոտրանսպորտային» ՓԲԸ-ի 100 տոկոս բաժնեմասերը՝ 2,387,605 հազար դրամ արժեքով: 2022թ. հունիսին Հիմնադրամը ձեռք է բերել «Էկո Տուն» ՍՊԸ-ի 100 տոկոս բաժնեմասերը՝ 11,000 հազար դրամ արժեքով, որը պետական գրանցում է ստացել 2022թ. հունիսի 8-ին:

«Դիլիջան Դեվելոփմենթ Քամփնի» ՓԲԸ-ն, «Դ Վենչուրս» ՓԲԸ-ն, «Էկո Տուն» ԱՊԸ-ն և «Դիլիջանի բեռնաուղևորատար ավտոտրանսպորտային» ՓԲԸ-ն հանդիսանում են «Դիլիջան Դեվելոփմենթ» Հիմնադրամի դուստր ընկերությունները (միասին՝ Խումբ):

Հիմնական նպատակներն են.

- տարածքների վերածումը համաշխարհային ճանաչում ունեցող կրթական, պատմամշակութային, տուրիստական և առողջարանային կենտրոնի,
- տարածքների պատմամշակութային, տուրիստական, առողջարանային և կրթական զարգացումը, տարածքների սոցիալտնտեսական մակարդակի և ներդրումային գրավչության բարձրացումը,
- տարածքների պատմամշակութային, տուրիստական, առողջարանային և կրթական ոլորտների ենթակառուցվածքների զարգացումը և կատարելագործումը, դրանց ներդրումային գրավչության բարձրացումը,
- Դիլիջանի միջազգային դպրոցին հարակից տարածքների զարգացումը,
- վերոնշյալ նպատակների իրագործմանը նպաստող մշակութային, սպորտային և ժամանցային միջոցառումների անցկացումը:

2022թ. ընթացքում Խմբի աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 34 աշխատակից (2021թ.՝ 21):

Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը հաստատել է արդյունավետ կառավարման իր

հանձնառությունը, որը ենթադրում է հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվողականություն:

Իրավիճակն Հայաստանի Հանրապետությունում էլ ավելի է սրվել Ադրբեջանի Հանրապետության կողմից սանձազերծված պատերազմի արդյուքում: Չնայած կնքված զինադադարի համաձայնագրին՝ դեռևս անորոշ են պատերազմի հետևանքները Հայաստանի տնտեսության վրա թե կարճաժամկետ, և թե երկարաժամկետ առումներով:

2022թ. փետրվարի 24-ին Ուկրաինայում բռնկված հակամարտությունն արագությամբ ծավալվում է՝ զգալի ազդեցություն թողնելով աշխարհի վրա: ԱՄՆ-ն և եվրոպական երկրները կոշտ պատժամիջոցներ են կիրառել Ռուսաստանի Դաշնության դեմ: Արևմտյան երկրները քննարկում են գոյություն ունեցող պատժամիջոցների ընդլայնումը: Ռուսաստանի Դաշնությունը Հայաստանի Հանրապետության էական առևտրատնտեսական գործընկերն է, ուստի սույն ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ կիրառվող պատժամիջոցները, ինչպես նաև դրանց ընդարձակումը կարող են լուրջ ազդեցություն ունենալ Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկաների և ամբողջ տնտեսության վրա: Համաշխարհային մակարդակով ավելի խոր պատժամիջոցներ կիրառելը կարող է հանգեցնել բարձր գնաճի, ֆինանսական շուկաների աճի տեմպի նվազման և որոշակի խաթարման:

Ուկրաինայում բռնկված հակամարտությունը պատճառ դարձավ, որ հազարավոր ռուսներ և ուկրաինացիներ տեղափոխվեն Հայաստանի Հանրապետություն: Սա վերաբերում է ոչ միայն անհատներին, այլ նաև ձեռնարկություններին, որոնք հիմնադրվել և իրենց գործունեությունը ծավալել են այդ երկրներում: Դա հանգեցրեց հայկական շուկա արտարժույթի ներհոսքի ավելացմանը, ինչի հետևանքով հայկական դրամը զգալի արժևորվեց ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ:

2022թ. Հայաստանի Հանրապետությունում քաղաքական իրավիճակը շարունակել է մնալ համեմատաբար անկայուն, 44-օրյա Արցախյան պատերազմի հետևանքները դեռևս էական ազդեցություն են ունենում երկրի ընդհանուր վիճակի և տնտեսվարող սուբյեկտների գործունեության վրա: 2022թ. դեկտեմբերից Հայաստանը Արցախին կապող գլխավոր ճանապարհը շարունակում է փակ մնալ՝ ենթադրելով ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական ճնշումներ: Քաղաքական անկայուն իրավիճակի, միջազգային ճանապարհների պարբերաբար փակման, հրադադարի ռեժիմի կարճաժամկետ խախտումների, Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածք ապօրինի ներթափանցման փորձերի հետևանքով, դժվար է հստակ կանխատեսել նշված պայմանների տնտեսական ազդեցությունը Խմբի գործունեության վրա:

Այնուամենայնիվ, ղեկավարության գնահատմամբ այն նշանակալի ազդեցություն չի ունենա Խմբի գործունեության և ֆինանսական հաշվետվությունների վրա, քանի որ Խումբը ֆինանսավորվում է միջազգային դոնորների կողմից՝ իրականացնելու Դիլիջան համայնքի զարգացման ծրագրեր և զբոսաշրջության ոլորտում աշխատող դուստր ընկերությունների գործունեությունից, որն ակտիվ զարգացման փուլում է գտնվում, և չկան այնպիսի գործոններ, որոնք կասկածի տակ կդնեն այդ գործողությունների ու նախաձեռնությունների շարունակական լինելը:

Խմբի ղեկավարությունը գտնում է, որ իր ընթացիկ իրացվելիության վիճակը բավարար է կայուն գործունեության համար: Խումբը պարբերաբար վերանայում է իր իրացվելիության մակարդակը և, անհրաժեշտության դեպքում, պատրաստ է կիրառել իրացվելիության աջակցության համապատասխան գործիքակազմ:

Վերոնշյալ իրադարձությունները կարող են հետագայում էական ազդեցություն ունենալ Խմբի ապագա գործունեության և ֆինանսական կայունության վրա, որոնց ամբողջական հետևանքները դժվար է կանխատեսել ներկա պահին: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Խմբի գործունեության վրա կարող են տարբերվել Խմբի ղեկավարության ներկա սպասումներից:

Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Խմբի գործունեության վրա:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Խումբն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

Ներկայումս ՖՀՄՍ-ները չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՍ-ները չեն տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՍ-ների ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) *«Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների»*:

2.2 Չափման հիմքեր

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքով և հողամասերի, որոնք հաշվառվում են վերագնահատված արժեքներով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Խմբի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Խմբի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Խմբի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ներին համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Խմբի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում համախմբված ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 20-ում: Չնայած ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են ղեկավարության կողմից

ներկա ցուցանիշների վերաբերյալ տեղեկացված լինելու վրա, այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, հազվադեպ են համապատասխանում իրական արդյունքներին: Հետևաբար, կատարված ենթադրությունները և դատողությունները համապատասխանաբար կճշգրտվեն այն տարում, որում պայմանները կփոխվեն:

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Խումբն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2022թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Խմբի կողմից

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Խմբի կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

2.6 Դուստր ընկերություններ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներառված են հետևյալ դուստր ընկերությունները.

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Դուստր ընկերություն	Մասնաբաժին %	Գրանցման երկիր	Գրանցման ամսաթիվ
«Դիլիջան Դեվելոփմենթ Քամփնի» ՓԲԸ	100%	ՀՀ	2013թ., հոկտեմբերի 7
«Դ Վենչուրս» ՓԲԸ	100%	ՀՀ	2013թ., ապրիլի 19
«Դիլիջանի բեռնատեղեորատար ավտոտրանսպորտային» ՓԲԸ	100%	ՀՀ	2005թ., հոկտեմբերի 25
«Էկո Տուն» ՍՊԸ	100%	ՀՀ	2022թ., հունիսի 8

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Դուստր ընկերություն	Մասնա-բաժին %	Գրանցման երկիր	Գրանցման ամսաթիվ
«Դիլիջան Դեվելոփմենթ Քամփնի» ՓԲԸ	100%	ՀՀ	2013թ., հոկտեմբերի 7
«Դ Վենչուրս» ՓԲԸ	100%	ՀՀ	2013թ., ապրիլի 19
«Դիլիջանի բեռնաուղևորատար ավտոտրանսպորտային» ՓԲԸ	100%	ՀՀ	2005թ., հոկտեմբերի 25

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Համախմբման հիմքերը

Խմբի ֆինանսական հաշվետվությունները համախմբում են մայր ընկերության և իր բոլոր դուստր ընկերությունների՝ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվությունները: Բոլոր դուստր ընկերությունների հաշվետու ամսաթիվը դեկտեմբերի 31-ն է:

Համախմբման ժամանակ Խմբի ընկերությունների միջև բոլոր գործարքները և մնացորդները բացառվում են, ներառյալ Խմբի ընկերությունների միջև գործարքների արդյունքում չվաստակած օգուտները և չկրած վնասները: Երբ ակտիվի ներխմբային վաճառքից առաջացող չկրած վնասը համախմբման ժամանակ հակադարձվում է, հիմքում ընկած ակտիվը նաև ենթարկվում է արժեզրկվածության գծով ստուգման՝ Խմբի տեսանկյունից:

Տարվա ընթացքում ձեռք բերած կամ օտարած դուստր ընկերությունների շահույթը կամ վնասը և այլ համապարփակ արդյունքը ճանաչվում են ձեռքբերման ամսաթվից կամ մինչև օտարման ամսաթիվը, որը կիրառելի է:

Խումբը դուստր ընկերությունների ընդհանուր համախառն եկամուտը կամ վնասը բաշխում է մայր ընկերության սեփականատերերի և չվերահսկող բաժնեմասերի միջև՝ առաջնորդվելով սեփականության համապատասխան բաժնեմասով:

3.2 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Համախմբված Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Խմբի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը. 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 393.57 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 420.06 ՀՀ դրամ (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 480.14 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 542.61 ՀՀ դրամ):

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի արդյունքում:

3.3 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների հոդվածները, բացառությամբ հողի, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, որոնք պահվում են վարձակալության տալու կամ վարչական, կամ դեռևս անորոշ նպատակով, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է տարվա արդյունքում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են տարվա արդյունքում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի աճը վերագրվում է այլ համապարփակ եկամուտներին և արտացոլվում է զուտ ակտիվներում և պահուստներում՝ որպես վերագնահատման պահուստ: Սակայն, եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվի նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, այն ճանաչվում է տարվա արդյունքում՝ որպես եկամուտ այն չափով, որով նախկինում նվազումը ճանաչվել էր որպես ծախս: Երբ հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է արդյունքում այն չափով, որը գերազանցում է նույն ակտիվի գծով նախորդ վերագնահատումից առաջացած վերագնահատման աճը:

Վերագնահատումից աճը ճանաչվում է կուտակված արդյունքում: Կուտակված արդյունքում ճանաչված վերագնահատումից աճը իրենից ներկայացնում է ակտիվի վերագնահատված հաշվեկշռային արժեքի և ակտիվի սկզբնական արժեքի տարբերությունը: Վերագնահատված հիմնական միջոցի միավորի իրացման կամ դուրսգրման դեպքում վերագնահատման պահուստում դրա գծով առկա վերագնահատումից աճը ուղղակիորեն վերագրվում է կուտակված արդյունքին:

Մաշվածությունը ճանաչվում է տարվա արդյունքում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր և շինություններ	-	10-50 տարի
Մեքենա սարքավորումներ	-	1-8 տարի
Աշտադրական, տնտեսական գույք	-	5-8 տարի
Այլ	-	5-8 տարի:

Քանի որ հողի համար հնարավոր չէ որոշել վերջավոր օգտակար ծառայության ժամկետ, դրա համապատասխան հաշվեկշռային արժեքը չի ամորտիզացվում:

3.4 Գուդվիլ և այլ ոչ նյութական ակտիվներ

Ձեռքբերված գուդվիլը սկզբնապես ճանաչվում է տրված փոխհատուցման և ձեռք բերվող ընկերության զուտ ակտիվների իրական արժեքի տարբերությամբ: Գուդվիլը չի ամորտիզացվում, փոխարենը այն յուրաքանչյուր տարի ենթարկվում է արժեզրկման ստուգման:

Այլ ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Խմբի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է տարվա արդյունքում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 5-10 տարի այլ ոչ նյութական ակտիվների համար:

3.5 Հիմնական միջոցների, գուդվիլի և այլ ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվներն արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

3.6 Վարձակալված ակտիվներ

Խումբը կնքում է վարձակալական պայմանագրեր հիմնականում հարակից տարածքների, ինչպես նաև տրանսպորտային միջոցների համար: Բոլոր վարձակալության պայմանագրերը կնքվում են անհատական հիմունքներով և պարունակում են տարբեր պայմաններ:

Խումբը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն պայմանագրի գործողության սկզբում: Վարձակալության պայմանագիրն իրավունք է տալիս որոշակի ժամանակահատվածում սահմանելու որոշակիացված ակտիվի

օգտագործման ուղղությունները և ստանալու որոշակիացված ակտիվից բոլոր տնտեսական օգուտները՝ փոխհատուցման դիմաց:

Վարձակալության ճանաչումը և չափումը որպես վարձակալ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Խումբը իր ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Խմբի կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին ակտիվի ապատեղակայման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից (հանած ստացված ցանկացած խրախուսումները):

Խումբը հաշվարկում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Խումբը նաև գնահատում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը արժեզրկման համար, երբ այդպիսի ցուցանիշներ կան:

Մեկնարկի ամսաթվին Խումբը չափում է վարձակալության գծով պարտավորությունը այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ դրանք զեղչելով՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել, կամ Խմբի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվող վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումներ (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ), վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, գումարներ, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և վճարումներից, որոնք առաջանում են օպցիոններից, որոնց իրագործման վերաբերյալ կա խելամիտ համոզմունք:

Սկզբնական չափումից հետո պարտավորությունը կնվազեցվի կատարված վճարումների և կմեծացվի տոկոսների չափով: Այն վերաչափվում է՝ արտացոլելու ցանկացած վերագնահատում կամ փոփոխություն, կամ եթե առկա են փոփոխություններ ըստ էության հաստատուն վճարումներում:

Երբ վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է, համապատասխան ճշգրտումը արտացոլվում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվում կամ շահույթում և վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվը նվազեցվել է զրոյի:

Խումբը կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար ընտրել է գործնական մոտեցումներ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն ճանաչելու փոխարեն, դրանց հետ կապված վճարումները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես ծախս՝ գծային հիմունքով:

3.7 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ)/, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

3.8 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Խումբը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքում:

Ներկայացված ժամանակաշրջաններում Խումբը չունի որպես այլ համապարփակ արդյունքում իրական արժեքով հաշվառվող դասակարգված ֆինանսական ակտիվներ:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Խումբը՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը
- Ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական եկամուտում կամ այլ ֆինանսական արդյունքներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը արտացոլված է այլ ծախսերում: Խմբի ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 21.2-ում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմանները առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունը աննշան է, զեղչում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Խմբի դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը և այլ դեբիտորական պարտքերի մեծամասնությունը:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»: ՖՀՄՍ 9-ի պահանջների շրջանակներում ընդգրկվող գործիքները ներառում են տրված վարկերը և փոխառային տիպի այլ ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով և իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքում, առևտրային դեբիտորական պարտքերը, պայմանագրային ակտիվները որոնք ճանաչվել և չափվել են ՖՀՄՍ 15-ի համաձայն և վարկային պարտավորությունները և որոշ ֆինանսական երաշխավորության պայմանագրերը (թողարկողի համար), որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթում կամ վնասում:

Պարտքային կորուստների ճանաչումը այլևս կախված չէ Խմբի՝ պարտքային կորուստը բնորոշող իրադարձության սկզբնական բացահայտումից: Փոխարենը, պարտքային ռիսկը գնահատելիս և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Խումբը դիտարկում է տեղեկատվության ավելի ընդլայնված զանգված՝ ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, խելամիտ և հիմնավորված կանխատեսումները, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա:

Առաջընթաց գնահատման մոտեցումը կիրառելիս առանձնացվում են հետևյալները.

- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն չեն վատթարացել կամ ունեն ցածր պարտքային ռիսկ («Փուլ 1») և
- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն վատթարացել են և որոնց պարտքային ռիսկը ցածր չէ («Փուլ 2»):

«Փուլ 3»-ը ընդգրկում է այն ֆինանսական ակտիվները, որոնց մասով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա են արժեզրկման օբյեկտիվ ապացույցներ:

Առաջին դասի ակտիվների համար ճանաչվում են «12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները», մինչդեռ «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները» ճանաչվում են երկրորդ դասի ակտիվների համար: Ակնկալվող պարտքային կորուստների չափումը որոշվում է ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի պարտքային կորուստների հավանականության միջին կշռված գնահատումով:

Դեբիտորական պարտքեր և պայմանագրային ակտիվներ

Խումբը հաշվառում է առևտրային և այլ դեբիտորական պարտքերը և պայմանագրային ակտիվները օգտվելով պարզեցված մոտեցումից և կորստի գծով պահուստը ձևակերպում է որպես գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ: Դրանք իրենցից ներկայացնում են պայմանագրային դրամական հոսքերի ակնկալվող դադարեցումները՝ հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չմարվելու հնարավորությունը: Ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Խումբն օգտագործում է պահուստի մատրիցան՝ ելնելով պատմական փորձից, արտաքին ցուցանիշներից և ապագային առնչվող տեղեկատվությունից

Խումբը գնահատում է առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկումը հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ, դրանք խմբավորվել են՝ ելնելով ժամկետանց օրերից:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Խմբի ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները, և առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Խմբի ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն 21.2-ում:

Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Իրական արժեքի և նոմինալ արժեքի տարբերությունը ճանաչվում է տարվա արդյունքում, բացառությամբ այն դեպքերի, երբ փոխառությունը ստացվել է հիմնադիրներից: Այս դեպքում իրական և նոմինալ արժեքների միջև տարբերությունը ճանաչվում է զուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունում: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է տարվա արդյունքում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

Կրեդիտորական պարտքեր

Կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.9 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները և դրամական միջոցները՝ ճանապարհին:

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Խումբը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոց-ների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

3.10 Կապիտալ և պահուստներ

Խմբի կապիտալը չի բաշխվում հիմնադիրներին ո՛չ սովորական գործունեության ընթացքում, ո՛չ էլ լուծարման ժամանակ:

Կուտակված արդյունքը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանի ամբողջ արդյունքը:

Վերագնահատման պահուստը ներառում է հողի շուկայական և սկզբնական արժեքների տարբերությունից առաջացող աճը:

Այլ կապիտալը ներառում է կապակցված կողմից ստացված փոխառություններն իրական արժեքով սկզբնական ճանաչումից առաջացող օգուտը;

3.11 Շնորհներ և նվիրատվություններ

Դրամաշնորհները ստացվում են որոշակի նպատակներով և նախատեսված չեն Խմբի ընդհանուր օգտագործման համար: Այս դրամաշնորհները չեն ճանաչվում, քանի դեռ չկա

հիմնավոր հավաստիացում, որ Խումբը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Շնորհները, որոնց հիմնական պայմանը Խմբի կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սիստեմատիկորեն փոխանցվում են շահույթ կամ վնաս՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ շնորհները ճանաչվում են սիստեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են:

Շնորհը, որը հատկացվում է Հիմնադրամին՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

Անսահմանափակ նվիրատվությունները հասանելի են ընդհանուր նպատակների համար, ինչպես սահմանված է Խմբի կառավարման փաստաթղթերում: Հետևաբար, անսահմանափակ միջոց ճանաչված նվիրատվությունները ճանաչվում են որպես հասույթ, երբ դառնում են ստացման ենթակա:

3.12 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,

(գ) սոցիալական ապահովության մասհանումները և այլ սոցիալական վճարները

(դ) ոչ դրամային հատուցումները:

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Խմբին մատուցում են ծառայություններ, Խումբն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

(ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Խումբը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

(բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

(ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

(բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Խումբն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Խումբը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

3.13 Հասույթ

Հասույթը ձևավորվում է հիմնականում հուշանվերների մանրածախ առևտրից, հյուրանոցային, սննդի, և վարձակալության ծառայությունների մատուցումից:

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահին կամ ժամանակի ընթացքում, երբ Խումբը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքը կամ ծառայությունը: Խումբը ճանաչում է դեռևս չբավարարված կատարման պարտականությունների համար ստացված հատուցման դիմաց պայմանագրային պարտավորությունները և արտացոլում է այդ գումարները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես հաճախորդներից ստացված կանխավճարներ (տե՛ս ծանոթագրություն 7): Նման ձևով, եթե Խումբը բավարարում է կատարման պարտականությունը մինչև հատուցման ստանալը, Խումբը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է կամ պայմանագրային ակտիվ, կամ դեբիտորական պարտք՝ կախված նրանից, թե արդյոք հատուցման ժամկետը լրանալուց առաջ անհրաժեշտ է միայն որոշակի ժամանակ, թե այլ լրացուցիչ պայման:

4 Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Շենքեր, շինություններ և կառուցվածքներ	Մեքենաներ և սարքավորումներ	Արտադրական, տնտեսական գույք և այլ	Հողամասեր	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	Անավարտ շինարարություն	Ընդամենը
Սկզբնական արժեք							
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	273,727	18,930	48,012	1,025,872	5,563	-	1,372,104
Ավելացում	31,508	4,915	8,916	55,506	-	-	100,845
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	305,235	23,845	56,928	1,081,378	5,563	-	1,472,949
Ավելացում	105,599	14,606	32,756	-	-	62,593	215,554
Օտարում	-	(807)	(178)	-	(221)	-	(1,206)
Նոր ձեռքբերված դուստր ընկերության հիմնական միջոցների սկզբնական արժեքի ավելացում	-	1,067	38,031	-	-	-	39,098
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	410,834	38,711	127,537	1,081,378	5,342	62,593	1,726,395
Կուտակված մաշվածություն							
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	94,585	10,704	23,277	-	556	-	129,122
Տարվա հաշվարկ	22,291	2,647	8,189	-	556	-	33,683
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	116,876	13,351	31,466	-	1,112	-	162,805
Տարվա հաշվարկ	58,266	4,525	16,785	-	1,034	-	80,610
Օտարման հետևանքով դուրսգրում	-	(657)	(178)	-	-	-	(835)
Վարձակալության պայմանների փոփոխություն	-	-	-	-	353	-	353
Նոր ձեռքբերված դուստր ընկերության հիմնական միջոցների կուտակված մաշվածության ավելացում	-	642	11,157	-	-	-	11,799
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	175,142	17,861	59,230	-	2,499	-	254,732
Հաշվեկշռային արժեք							
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	188,359	10,494	25,462	1,081,378	4,451	-	1,310,144
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	235,692	20,850	68,307	1,081,378	2,843	62,593	1,471,663

Հաշվետու ամսաթվի դրությամբ Խումբը գրավադրված հիմնական միջոցներ չունի:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը ճանաչվել է «Դ Վենչուրս» ՓԲԸ-ի կողմից Դիլիջան քաղաքի Կամարինի 29/3 հասցեում վարձակալված տարածքի մասով:

5 Այլ ոչ նյութական ակտիվներ

Հազար դրամ	Համակարգչային ծրագրեր	Կառուցապատման իրավունքներ և այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք			
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	1,966	81,889	83,855
Ավելացում	12	-	12
Օտարում	(350)	(501)	(851)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,628	81,388	83,016
Ավելացում	-	8,580	8,580
Նոր ձեռքբերված դուստր ընկերության ոչ նյութական ակտիվների սկբնական արժեքի ավելացում	8	1,560	1,568
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,636	91,528	93,164
Կուտակված ամորտիզացիա			
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	1,175	26,603	27,778
Տարվա հաշվարկ	193	6,140	6,333
Օտարման հետևանքով դուրսգրում	(350)	(501)	(851)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,018	32,242	33,260
Տարվա հաշվարկ	88	7,219	7,307
Նոր ձեռքբերված դուստր ընկերության ոչ նյութական ակտիվների կուտակված մաշվածության ավելացում	2	397	399
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,108	39,858	40,966
Հաշվեկշռային արժեք			
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	610	49,146	49,756
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	528	51,670	52,198

6 Գուդվիլ

Հազար դրամ	Սկզբնական արժեք	Կուտակված արժեզրկում	Ընդամենը
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,377,355	2,114,757	262,598
Ավելացում	11,628	-	11,628
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,388,983	2,114,757	274,226

Գուդվիլն առաջացել է «Դիլիջանի բեռնաուղևորատար ավտոտրանսպորտային» ՓԲԸ-ի ձեռքբերումից, տարվա ավելացումն առաջացել է «Էկո Տուն» ՍՊԸ-ի ձեռքբերումից:

Գուդվիլի արժեզրկման սպուգում

Համաձայն Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության, գուդվիլը չի ամորտիզացվում: Հետևաբար, Խմբի ղեկավարությունը տարեկան կտրվածքով կատարում է գուդվիլի փոխհատուցվող գումարի գնահատում, որի հիմքում ընկած է այն գումարի գնահատումը, որը Խումբը կստանա «Դիլիջանի բեռնաուղևորատար ավտոտրանսպորտային» ՓԲԸ-ում և «Էկո Տուն» ՍՊԸ-ում իր ներդրումները վաճառելու արդյունքում: Խմբի ղեկավարության գնահատմամբ, հաշվետու ամսաթվի դրությամբ գուդվիլի փոխհատուցվող գումարը մոտավորապես հավասար է նրա հաշվեկշռային արժեքին:

Փոխհատուցվող գումարի գնահատման հիմքում ընկած են հետևյալ ենթադրությունները.

- Խումբն ի վիճակի է վաճառել իր ներդրումները՝ նման որոշում ընդունելուց հետո ոչ ուշ, քանի 12 ամսվա ընթացքում,
- Գուդվիլի օգտագործման արժեքն ավելի փոքր է, քան ներդրման վաճառքից ակնկալվող ապագա դրամական հոսքերը,
- Ապագա դրամական ներհոսքերը մոտավորապես հավասար կլինեն գուդվիլի հաշվեկշռային արժեքին,
- Ապագա դրամական ներհոսքերի զեղչման ազդեցությունն էական չի լինի:

7 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ		
Առևտրային դեբիտորական պարտքեր	11,846	1,248
	11,846	1,248
Ոչ ֆինանսական ակտիվներ		
Տրված կանխավճարներ	152,512	18,821
Պետական բյուջեից դեբիտորական պարտքեր	4,116	7,096
	156,628	25,917
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	168,474	27,165

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Տե՛ս ծանոթագրություն 22՝ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժույթների բացահայտման համար:

8 Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Բանկային հաշիվներ	38,239	62,859
Կանխիկ միջոցներ	1,527	1,366
Դրամական միջոցներ ճանապարհին	199	292
	39,965	64,517

Տե՛ս ծանոթագրություն 22՝ դրամարկղում և բանկում մնացորդների արժույթների բացահայտման համար:

9 Փոխառություններ

Հազար դրամ	Ոչ ընթացիկ	
	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կապակցված կողմերից չապահովված փոխառություններ	2,996,965	3,272,896
	2,996,965	3,272,896

Ոչ ընթացիկ փոխառությունների իրական արժեքները հետևյալն են.

Հազար դրամ	Իրական արժեք		Հաշվեկշռային արժեք	
	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կապակցված կողմերից չապահովված փոխառություններ	2,996,965	3,272,896	3,886,991	3,706,667
	2,996,965	3,272,896	3,886,991	3,706,667

Խմբի փոխառությունները տրամադրվել են ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերության կողմից:

Ոչ ընթացիկ փոխառությունների իրական արժեքը հաշվարկվել է՝ զեղչելով դրամական միջոցների հոսքերը 5.5% տոկոսադրույքով (2021թ.՝ 5.5%):

Տե՛ս ծանոթագրություն 22՝ վարկերի և փոխառությունների արժույթների բացահայտման համար:

10 Հետաձգված հարկեր

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված գումարները վերաբերում են «Դիլիջանի բեռնաուղևորատար ավտոտրանսպորտային» ՓԲԸ հողի վերագնահատմանը:

2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետաձգված հարկի մնացորդը կազմել է 60,718 հազար դրամ: Հաշվարկը կատարվել է կիրառելով շահութահարկի գործող 18% դրույքաչափը:

11 Ակտիվներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2022թ.	2021թ.
Մնացորդ տարվա սկզբում	134,428	139,581
Ստացված տարվա ընթացքում	99,957	884
Ճանաչված եկամուտ (տե՛ս ծանոթ. 15)	(9,019)	(6,037)
Տարեվերջի մնացորդ	225,366	134,428

12 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	57,498	18,793
Վարձակալված ակտիվի գծով պարտքեր	3,435	4,675
Պարտավորություններ աշխատակիցներին	4,263	3,054
Վճարվելիք հարկեր և պարտավորություններ	9,548	4,188
Հաճախորդներից կանխավճարներ	1,817	1,295
Այլ	254	351
	76,815	32,356

Խմբի արտարժութային ռիսկի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է ծանոթագրություն 22-ում:

13 Հասույթ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հյուրանոցային և սննդի ծառայությունների մատուցումից հասույթ	172,501	193,243
Ծառայությունների մատուցումից հասույթ	49,100	6,482
Այլ	147	5,180
	221,748	204,905

14 Ծառայությունների ինքնարժեք

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Օգտագործված ապրանքների արժեք	41,412	57,548
Հատուցումներ աշխատակիցներին	78,678	58,033
Մաշվածության ծախսեր	13,368	15,513
Այլ	1,534	9,583
	134,992	140,677

15 Շնորհներից և նվիրատվություններից եկամուտ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ (տե՛ս ծանոթագրություն 11)	9,019	6,037
Նվիրատվություններից եկամուտ	474,269	315,445
	483,288	321,482

Նվիրատվությունից եկամուտը ստացվել է հետևյալ գործընկերներից՝

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Օտարերկրյա ընկերություններ	16,368	47,797
Հայկական ընկերություններ	360,130	231,332
Ֆիզիկական անձինք	97,483	36,316
Այլ	288	-
	474,269	315,445

16 Համայնքի զարգացման ծախսեր

Համայնքային ծախսերը ներառում են Հայ Առաքելական Եկեղեցու հետ կնքված նվիրատվության պայմանագրի հիման վրա Դիլիջան քաղաքում պատմամշակութային եկեղեցու կառուցման աշխատանքների և եկեղեցու հարակից տարածքի բարեկարգման աշխատանքների գծով կատարված ծախսերը, ինչպես նաև Դիլիջան քաղաքի համայնքի զարգացման համար կատարված այլ ծախսեր:

17 Վարչական ծախսեր

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Փոխհատուցումներ աշխատակիցներին	28,390	10,187
Անվտանգության և պահպանության ծառայություններ	32,290	28,220
Մաշվածություն և ամորտիզացիա	63,736	11,225
Հաշվապահական և խորհրդատվական ծախսեր	40,962	36,772
Չփոխհատուցվող հարկեր	20,649	11,007
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	26,829	20,047
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	6,440	2,340
Նորոգման և սպասարկման ծախսեր	121,833	11,689
Կանխավճարի դուրսգրման ծախսեր	-	20,089
Այլ	30,204	19,621
	371,333	171,197

18 Այլ ծախսեր

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Մաշվածություն և ամորտիզացիա	10,813	13,278
Փոխհատուցումներ աշխատակիցներին	-	5,832
Այլ	2,814	2,290
	13,627	21,400

19 Ֆինանսական ծախս

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Փոխառությունների իրական արժեքի ճշգրտում	166,834	179,141
Վարձակալության գծով տոկոսային ծախսեր	128	264
	166,962	179,405

20 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

20.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Խումբն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում: Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներն էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

Իրական արժեքի չափում

Այն պարագայում, երբ գործող շուկաների տվյալները բացակայում են, ֆինանսական գործիքների իրական արժեքը և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը որոշելու համար ղեկավարությունը օգտագործում է գնահատման մեթոդներ: Այս գործընթացը ընդգրկում է գնահատումների և ենթադրությունների մշակում, որոնք համահունչ են նրա հետ, թե ինչպես շուկայի մասնակիցները կգնահատեին գործիքը: Ղեկավարությունը իր ենթադրությունների համար որպես հիմք է վերցնում դիտարկելի տեղեկատվությունը, սակայն այդպիսի տեղեկատվությունը միշտ չէ, որ հասանելի է: Այս պարագայում ղեկավարությունը օգտագործում է հասանելի լավագույն տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել հաշվետու ամսաթվի դրությամբ իրական գներից, որոնք կարող են ստացվել պարզած ձեռքի գործարքի պարագայում (տե՛ս ծանոթագրություն 23):

Հետաձգված հարկային ակտիվների ճանաչումը

Այն չափը, որով կարող է ճանաչվել հետաձգված հարկային ակտիվ, կախված է այն հավանականության գնահատումից, թե արդյո՞ք ապագայում հասանելի կլինի եկամուտ, որի

դիմաց կիրացվեն նվազեցման ենթակա ժամանակավոր տարբերությունները և նախորդ ժամանակաշրջաններից բերված հարկային վնասը: Ի լրումն, անհրաժեշտ է էական դատողություն հարկային միջավայրում իրավական և տնտեսական սահմանափակումների և անորոշությունների գնահատման ժամանակ:

Գուդվիլի փոխհատուցվող գումարի գնահատում

Գուդվիլի հետ կապված գնահատումներն ու ենթադրությունները նկարագրված են ծանոթագրություն 6-ում:

21 Ֆինանսական գործիքներ

21.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.8-ում:

21.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	11,846	1,248
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	39,965	64,517
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	51,811	65,765

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով պահվող ֆինանսական պարտավորություններ		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	65,196	26,522
Փոխառություններ	2,996,965	3,299,418
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	3,062,161	3,301,208

22 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Խումբը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Խումբը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի:

Արտարժութային ռիսկ

Խումբը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Խմբի գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Խմբի՝ կապակցված կողմերից ստացված փոխառություններից, որոնք, ի սկզբանե, արտահայտված են ԱՄՆ դոլարով և եվրոյով:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Խմբին ենթարկում են արտարժութային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են հիմնական ղեկավար անձնակազմին տրամադրված տվյալները, որոնք արտահայտված են հայկական դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով.

Հոդված

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար	Եվրո
Ֆինանսական ակտիվներ		
Մնացորդներ բանկերում	388	-
Ֆինանսական պարտավորություններ		
Փոխառություններ	2,872,262	104,358
Առևտրային կրեդիտորական պարտքեր	-	396
Զուտ արդյունք	(2,871,874)	(104,754)

Հոդված

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար	Եվրո
Ֆինանսական ակտիվներ		
Մնացորդներ բանկերում	51,893	-
Ֆինանսական պարտավորություններ		
Փոխառություններ	3,144,442	127,776
Զուտ արդյունք	(3,092,549)	(127,776)

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Խմբի զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի 10% (2021թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2021թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2021թ.՝ 10%):

Դրամի արժևորումը ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ 10%-ով (2021թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը:

Հազար դրամ	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Եվրոյի ազդեցություն	
	2022թ.	2021թ.	2022թ.	2021թ.
Տարվա արդյունք	(287,187)	(309,255)	(10,475)	(12,778)
	(287,187)	(309,255)	(10,475)	(12,778)

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Խմբի՝ արտարժութային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

բ) *Պարտքային ռիսկ*

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Խումբը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Խմբի պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցները և դրանց համարժեքները և առևտրային և այլ դեբիտորական պարտքերը:

Հաշվետու ամսաթվի դրությամբ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի գծով նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ:

Դրամական միջոցների և դրանց համարժեքների մասով պարտքային ռիսկն ընդունելի է, քանի որ պայմանագրային գործընկերները հեղինակավոր բանկեր են:

գ) *Իրացվելիության ռիսկ*

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Խումբն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Խումբը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Խմբի ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների զեղչված և չզեղչված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Խումբը ստիպված կլիներ մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական միջոցների հոսքերը:

2022թ.	Անտոկոս	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%)	5.0%	
Մինչև 1 տարի	163,690	163,690
1-10 տարի	3,078,542	3,078,542
	3,242,232	3,242,232

2021թ.	Անտոկոս	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%)	5.5%	
Մինչև 1 տարի	28,312	28,312
1-10 տարի	3,272,896	3,272,896
	3,301,208	3,301,208

Խումբն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը: Խմբի դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերն գերազանցում են անհրաժեշտ դրամական արտահոսքերը:

23 Իրական արժեքի չափում

Խումբը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

23.1 Ֆինանսական գործիքների իրական արժեքի չափում

Ստորև ցույց են տրված նշված մակարդակները՝ պարբերական սկզբունքով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հիերարխիայում՝ 2022թ. դեկտմբերի 31-ի և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց համար բացահայտված է իրական արժեքը

Կապակցված կողմերից անտոկոս փոխառությունները տրամադրվել են օֆշորում գրանցված կապակցված կողմից: Այն ունի 1-9 տարի մարման ժամկետ և անտոկոս է: Հիմնադրից ստացված վարկի գնահատված իրական արժեքը դասակարգվում է իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում: Իրական արժեքի գնահատումը որոշվում է՝ օգտագործելով ներկա արժեքի հաշվարկման մոտեցումը: 2,996,965 հազար դրամ (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 3,272,896 հազար դրամ) գումարը գնահատվել է՝ զեղչելով պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը 5.5 %-ով: Ամենազգալի փոփոխականը զեղչման տոկոսադրույքն է:

23.2 Ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքի չափում

Ընկերության հողը և շենքերը հաշվառվում են վերագնահատված արժեքով: Հողի և շենքերի գնահատված իրական արժեքները դասակարգվում են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ

մակարդակում: Այս ակտիվների իրական արժեքները գնահատվում են՝ հիմք ընդունելով անկախ, մասնագիտական որակավորում ունեցող գնահատողների գնահատականները, որոնք ունեն անհրաժեշտ արտոնագրեր: Զգալի փոփոխականները և ենթադրությունները մշակվել են ղեկավարության հետ սերտ համագործակցության պայմաններում: Հետագա տեղեկատվությունը ներկայացված է ստորև:

Վարչական և կառուցապատման նպատակով պահվող հող (3-րդ մակարդակ)

Գնահատումն իրականացվել է՝ օգտագործելով շուկայական մոտեցումը, որն արտացոլում է նմանատիպ գույքի համար վերջերս իրականացված շուկայական գործարքներում դիտարկված գները և միավորում է վերոհիշյալ հողին յուրահատուկ ցուցանիշների ճշգրտումները՝ ներառյալ հողամասի չափը, գտնվելու վայրը, սահմանափակումները և օգտագործման նպատակը:

Նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալը վերոհիշյալ հողին յուրահատուկ ցուցանիշների ճշգրտումն է: Այս ճշգրտման չափը և ուղղությունը կախված է նմանատիպ գույքի հետ կապված դիտելի շուկայական գործարքների քանակից և բնույթից, որոնք օգտագործվում են որպես գնահատման սկզբնակետ: Չնայած այս ելակետային տվյալը հիմնված է սուբյեկտիվ դատողության վրա, ղեկավարությունը ենթադրում է, որ ընդհանուր գնահատումը էական ազդեցություն չի կրի ողջամտորեն հնարավոր այլընտրանքային ենթադրություններից:

24 Պայմանականություններ

24.1 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

24.2 Տրանսֆերային գնագոյացում

2020թ. հունվարի 1-ից ուժի մեջ է մտել ՀՀ Հարկային օրենսգրքի տրանսֆերային գնագոյացման կարգավորումներին վերաբերող գլուխը, որը սահմանում է առանձնահատկություններ՝ փոխկապակցված կողմերի միջև կատարվող գործարքների վերաբերյալ, սահմանում է հարկային մարմնի կողմից այդ գործարքները վերահսկվող համարելու, ինչպես նաև դրանց վերաբերյալ ծանուցում և փաստաթղթավորում ներկայացնելու կարգը: Նշված կարգավորումների նպատակն է պարզել, թե արդյոք փոխկապակցված կողմերի միջև գործարքների ֆինանսական ցուցանիշները համապատասխանում են պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին, ինչպես նաև չհամապատասխանելու դեպքում՝ սահմանվում է դրանց ճշգրտման կարգը հարկման բազան հաշվարկելու նպատակով: Նշված կարգավորումների կիրառությունը ենթակա է հարկային մարմնի կողմից առանձին ստուգման և պահանջված փաստաթղթավորման բացակայությունը կամ ոչ պատշաճ ներկայացնելը կարող է հանգեցնել էական հետևանքների:

Օրենսգրքի նշված գլուխը պարունակում է շատ անորոշություններ, իսկ նախկինում Հայաստանի Հանրապետությունում նմանատիպ կարգավորումներ չեն կիրառվել: Արդյունքում՝ չկա նմանատիպ կարգավորումների մեկնաբանման և կիրառման բավարար փորձառություն:

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ Խումբն իրականացրել է տրանսֆերային գնագոյացման կարգավորումներին համապատասխան վերլուծություն, որի արդյունքում եզրահանգել է, որ այս փոփոխության ազդեցությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա էական չէ:

25 Կապակցված կողմեր

Խմբի կապակցված կողմերն են համատեղ վերահսկողության տակ գտնվող կազմակերպությունները, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձինք:

25.1 Վերահսկողություն

Խմբի հիմնադիրներն են «ՌՎՎԶ» Հիմնադրամը՝ ստեղծված Լիխտենշտեյնի Իշխանապետությունում և Ադիբեկյան Ֆեմիլի Ֆաունդեյշն Ֆոր Ըդվենսմենթ Էյ-Էս-Բի-Էլ ոչ առևտրային կազմակերպությունը՝ ստեղծված Լյուքսեմբուրգում:

25.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Խմբի և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

Հազար դրամ Գործարքներ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ		
Ստացված նվիրատվություններ	431,151	299,546
Ստացված ծառայություններ	53,664	51,538
փոխառությունների տրամադրում	10,000	-

Հազար դրամ Մնացորդներ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մայր ընկերություն		
Տրամադրված փոխառություններ	715,635	798,202
Դուստր ընկերություններ		
Տրամադրված փոխառություններ	125,009	122,398
Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ		
Տրամադրված փոխառություններ	10,000	3,272,896
Ստացված ծառայություններ	34,452	26,238
Ստացված փոխառություններ	172,645	-
Ծառայությունների մատուցում	300	1,800

25.3 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է «Վարչական ծախսեր» հոդվածներում.

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ և պարգևատրումներ	4,420	3,167

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մնացորդներ		
Չօգտագործված արձակուրդային օրերի գծով պահուստ	245	176

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 07.07.2023 11:07